արհեստաւորքն, ի շուկայսն իւրեանց աղօթս ասացեալ և աւրհնութիւն, և ապա գնացեալ ի ծովեզր ի տեղին յայն՝ որ կոչի Պալղափան, անդ սահման եդեալ, զի անդ սկսեսցին երթալ յառաջ։ Եւ յառաջ եւ օրտու ա-ղասին և օրտու ղազխսին զգեցեալք կապա յարքայէ։

ա. *Նախ սուպաշին ճանապարհ հորդեալ անցանէր. և գայր Նախ սերմանացանն վարելով զլուծն, իբր ա-ռաջին արհեստաւոր ասեն զոլ երկրագործ. ոչ գնեն գայս ի թիւ արհեստաւորաց, բայց վասն Նխնգծ (?) գնեն սկիզբն։*

բ. *Եւ յառաջ եղև երամակ ջահավառացն որ ասի մաշալլաճի, և բարձեալ էին զջահս ղամբարացն պա-տեալ ներքոյ և արտաքոյ ծիրանօք՝ հեծեալք, ընդ որ երթայինն պար առեալ խաղային յազգէն Արա-բացոց մի ի վերայ միոյ եւ երգէին ըստ բառին իւ-րեանց ունելով զՂուրանն. Իւէլ Շամ ախր Շամ. Ալ-լահ եէնսուրու սուլթան. և ընդ իւրեանս (տողը չերեւած) եդեալ ի վերայ ըղտոյ միոյ և վրան յօրինեալ ի վե-րայ և մանուկ մի նստեալ ընթեռնոյր։ Եւ ապա ընդ նմա հացն և չորակքն, զոր Դ Դ արք բարձեալ էին զմի ի նոցանէ և սիմիթ և այլ զանազան հացս սպի-տակս և գերմակս եփեալ հացածախիցն, եդեալ ի վե-րայ մեծամեծ սեղանոյ՝ եկեալ անցան, կացին առաջի թագաւորին որ անդ նստեալ էր ի պալատն՝ ի գահոյսն բազմեալ, որ ասի ըստ բառին իւրեանց Ալայ քեօշկի, տեսանել զբանակս ամենեցուն, և եկեալ կացին յան-դիման նմա ամենայն բանակ պետաց հացածախիցն որք էին յազգէն Հայոց, հեծեալ ի վերայ ձիոց՝ դասս դասս մանկամբք իւրեանց, որ ամենեքեան զրահուք և զինուք էին և փողով մեծաւ և թմբկաւ և տաւ-ղօք. և ասացին զաղօթս և աւրհնութիւն թագաւո-րին և ետուն զընծայս նկանակացն և հացիցն. և թա-գաւորն խիլայեաց զպետաց պետս նոցին, և եկեալ*